

վրայ քննէ խնդիրը: Նուիրակը Լէոպոլդս
կը ժամանէ 1665ի Օգոստոսի սկիզբները:
Ըստ Կալանոսի վկայութեան, ան մեծապէս
կը դժգոհի տեսնելով որ թէպէտեան կրօ-
նաւորները ա'յնքան միջամուխ եղած են
Լէոպոլսոյ հայոց մայր եկեղեցւոյն մէջ,
հայ դպրեւանք մը բացած են, սրբազրու-
թիւններ ներմուծած են ծիսական մատեան-
ներու մէջ եւ թէ Սրբազան Պապը կը յիշուի
Ս. Պատարագի եւ ժամերգութեանց ընթաց-
քին (6):

Դժգոհանքն ու անհամաձայնութիւնը
աւելի սուր հանգամանք մը կ'առնեն երկուս-
տեք, երբ Նուիրակը կ'որոշէ պատարագել
առանց նկատի առնելու ներմուծուած սըր-
բազրութիւնները: Կալանոս կ'ընդդիմանայ,
Թորոսովիչ Արքեպիսկոպոս որոշ տատա-
նումէ ետք համամիտ կ'ըլլայ Կալանոսի:
Սակայն Կաթողիկոսական Նուիրակը զաղտ-
նաբար իր ուզած կերպով կը պատարագէ
Լէոպոլսոյ արուարձանին մէջ ի ներկայու-
թեան հաւատացեալներու: Չայս լսելով,
Լէոպոլսոյ լատին Վիճակաւորը, Թառնովսքի
Արքեպիսկոպոս, կ'ուզէ Նուիրակը հեռա-
ցնել Լեհաստանէն: Սակայն Կալանոս կը
միջամտէ եւ կը յաջողի Թառնովսքիի քով
ճաշի հրաւիրել տալ Պօղոս Նուիրակը, Թո-
րոսովիչ Արքեպիսկոպոսը եւ մի քանի հայ
մեծամեծներ. եւ խնդիրը կը փակուի: Կա-
լանոս կը յաջողի նոյնիսկ Պօղոս Արքեպիս-
կոպոսին կարգաւ տալ իր երկասիրութիւնը՝

(6) Sac. Gregorio Pertrowicz, Ibidem, 201.